ԳՐԻՉ ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԱՀՆԵՑԻ

Հայ միջնադարյան գրչության եւ մանրանկարչության արվեստի երախտավորներից է գրիչ, մանրանկարիչ, երաժշտագետ, Սանահինի վանքի փակակալ եւ առաջնորդ Հովհաննես Սանահնեցին, որ ապրել եւ ստեղծագործել է ԺԴ-ԺԵ. դդ., Սանահինի վանքում: Հովհաննես Սանահնեցու գործունեությանն անդրադարձել են Արտաշես Մաթեւոսյանը[1], Կարեն Մաթեւոսյանը[2], Աստղիկ Գեւորգյանը[3] եւ Արամ Երեմյանը[4]:

Հովհաննես Սանահնեցու անվանն առաջին անգամ հանդիպում ենք 1399 -ից առաջ գրված Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետեւ՝ ՄՄ) թիվ 1537 ձեռագրի հիշատակարանում, որտեղ հիշվում են նաեւ նրա ուսուցիչները՝ Ղազար վարդապետը եւ վերջինիս եղբայր Հովհաննեսը: Իսկ 1423 թ., ՄՄ թիվ 1587 ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Հովհաննես Սանահնեցին եղել է Վարդանի եւ Խոնձի զավակը՝ «Ի մանկութենէ սնեալ եւ վարժեալ ի դրան Սուրբ Աստուածածնիս Սանահնոյ»[5]: Հիշատակարանում պահպանվել են նաեւ նրա հարազատ եղբայրների՝ Խաչատուրի, Աստվածատուրի եւ Մկրտչի, քույրերի՝ Բատրահաթունի եւ Խաթունի, ինչպես նաեւ եղբորորդիների՝ Ներսես կուսակրոն քահանայի եւ Վարդան դպիրի անունները:

Հայտնի է, որ Հովհաննես Սանահնեցին 1411 թ. մեկնում է Երուսաղեմ եւ ընդօրինակում մի Մանրուսմունք՝ «ի լաւ եւ յընտիր աւրինակէ Կարապետցոյ»[6]: Այնուհետեւ գրիչը գալիս է Սանահին եւ մինչեւ իր կյանքի վերջն ապրում է այս վանքում: 1436 թ. գրված Մաշտոցի հիշատակարանում ստացող Հովհաննես Սանահնեցին հանդես է գալիս արդեն որպես ուխտի փակակալ[7]: Իսկ 1437 թ. նրան տեսնում ենք որպես Սանահինի առաջնորդ[8]: Վերջին անգամ Հովհաննես գրչին հանդիպում ենք 1460 թ. գրված Մատենադարանի թիվ 9999 ձեռագրի հիշատակարանում, երբ նա, «ի դուռն զերեզմանին հասեալ»[9], նորոգում է կիլիկյան մի ձեռագիր՝ լրացնելով պակաս թերթերը եւ կազմելով այն: 1497 թ. գրված Շարակնոցի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Հովհաննես Սանահնեցին այդ թվականին արդեն մահացած էր. «Դարձեալ յիշեցէք զառաջին երախտաւորքն մեր՝ զհօրեղբայրքս, որ են փոխեալ առ Քրիստոս՝ տէր Յովհաննէս ճգնազգեաց եւ ամենայն առաքինութեանց ուսուցիչ եւ վարպետ՝ փակակալ սուրբ ուխտիս Սանահնու եւ տէր Ներսէս փիլիսոփայն»[10]:

Հովհաննես Սանահնեցուց մեզ հասած ձեռագրերի մի մասը պահվում է Մաշտոցի ան-

---

3Տե՛ս **Ա. Մաթեւոսյան**, Սանահնի եւ Հաղպատի գրչության կենտրոնները. «Էջմիածին», 1968, Զ, էջ 31-40:

4 Տե՛ս **Կ. Մաթեւոսյան**, Գրիչ եւ մանրանկարիչ Հովհաննես Սանահնեցու ինքնանկարները. «Գարուն», 1984, թիվ 10, էջ 91-93:

5 Տե՛ս **Ա. Գէորգեան**, Հայ մանրանկարիչներ, Մատենագիտութիւն IX-XIX դդ., Գահիրէ, 1998, էջ 521-523:

6 Տե՛ս **Ա. Երեմյան,** Գրիչ եւ ծաղկող Յովհաննէս Սանահնեցի, «Բազմավէպ», 1987, մարտ-ապրիլ, էջ 79-82:

7 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ե, կազմեց Օ. Եգանեան, Երեւան, 2009, էջ 574:

8 Անդ, էջ 130:

9 Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1401-1450թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1955, էջ 466:

10 Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ (1451-1480թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1958, էջ 468-470:

11 Անդ, էջ 436:

12 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1967, էջ 242:

վան Մատենադարանում (թիվ 1537, 1587, 2130, 4435, 8979, 9999), մեկ ձեռագիր՝ Էջմիածնի Մատենադարանում (թիվ 80), մեկական ձեռագիր՝ Վիեննայի Միխիթարյան մատենադարանում (թիվ 419), Վենետիկի Միխիթարյան մատենադարանում (թիվ 343), Երուսաղեմի մատենադարանում (թիվ 1534), Եւրոպայի մասնավոր հավաքածուում, մեկ ձեռագրի նկարագրություն՝ առկա է «Բազմավէպում», եւ մեկ ձեռագրի հիշատակարան՝ Արամ Երեմյանի վերոնշյալ հոդվածում: Ստորեւ ըստ թվականների հերթականության կներկայացնենք Հովհաննես Սանահնեցու ձեռագրերը:

Հովհաննես Սանահնեցուց մեզ հասած առաջին ձեռագիրը (ՄՄ թիվ 1537) Ներսես Շնորհալու «Բանք չափաւ» գործն է[11]: Ձեռագիրը գրվել է Սանահինում՝ «ձեռամբ Յովհաննիսի եւ Յոհաննիսի սիրասնունդ աշակերտի»[12]: Ստացողը Հովհաննես ուսուցիչն է: Ձեռագիրը գրվել է ԺԴ. դարավերջին՝ վրաց Գեորգի Է. (1394-1407) թագավորի օրոք, «զի յաւուրս սորա եղեւ խորին խաղաղութիւն կողմանն Վրաց»[13] (քանի որ 1399 թ. երկիրը ենթարկվել էր Լանկ-Թամուրի արշավանքներին, հետեւաբար՝ ձեռագիրը պետք է գրված լիներ դրանից առաջ, այդ պատճառով Լեւոն Խաչիկյանը հիշատակարանը տեղադրել է 1399-ի թվաշարքում)[14]: Այդ նույն ժամանակ Հովհաննես աբեղան եւ նրա եղբայր Ղազար վարդապետը գալիս եւ բնակվում են Սանահինի Սուրբ Աստվածածնի վանքում, որտեղ Հովհաննես ուսուցիչն ու իր աշակերտ Հովհաննես Սանահնեցին ընդօրինակում են այս ձեռագիրը: Ձեռագրի պատրաստման աշխատանքներին աջակցություն են ցուցաբերել նաեւ Կիրակոս եւ Մատթեոս (միաբան) եղբայրները, իսկ Դավիթը նրանց համար կերակուր է բերել[15]:

Հովհաննես Սանահնեցու մեզ հասած հաջորդ ձեռագիրը Մանրուսմունք է: 1411 թ. նա իր միաբան եղբայրների՝ տեր Մարկոսի եւ տեր Գրիգորի հետ գալիս է Երուսաղեմ եւ Սարգիս աբեղայի խնդրանքով ընդօրինակում այս Մանրուսմունքը: Հովհաննես Սանահնեցին հիշատակարանում նշում է իր ուսուցչի՝ Հովհաննես փիլիսոփայի եւ պատվիրատու Սարգիս աբեղայի հորեղբոր՝ տեր Հովհաննեսի (մականունը՝ Հեթում) անունները: Ձեռագիրը պահվում է մասնավոր հավաքածուում (Եւրոպա), հիշատակարանը հրատարակել է Լ. Խաչիկյանը[16]:

Արամ Երեմյանը «Գրիչ եւ ծաղկող Հովհաննես Սանահնեցի» հոդվածում գրում է 1418 թ. Սանահինում Հովհաննես Սանահնեցու ընդօրինակած մի Ավետարանի մասին, առանց գտնվելու տեղը նշելու[17]: Նա հիշատակարանից մեջբերել է հետեւյալ հատվածը. «Արդ, գրեալ եղեւ սա թվականութեան հայկազեան տումարի ՊԿԷ (1418) ի գերահռչակ սուրբ ուխ-

13 Ձեռագիրը բաղկացած է 191 թերթից, նյութը թուղթ է, մեծությունը՝ 15,7x11,5: Գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր: Կազմը դրոշմազարդ բալագույն կաշի է՝ դոնակով: Ունի նաեւ պատառիկ-պահպանակ (Ավետարան Մարկոսի): Ձեռագրում կան կիսախորան, ճակատազարդեր, լուսանցազարդեր եւ զարդագրեր՝ կարմիր եւ կապույտ գույներով:

14 «ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 626:

15 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ե, էջ 408:

16 Տե՛ս «ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 626:

17 «Յիշեցէք զԴաւիթ որդեակս մեր, որ երեր մեզ ախորժ կերակուր» (ՄՄ թիվ 1537, 115բ):

18 Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 130:

19 Այս Ավետարանի նյութը թուղթ է, գիրը՝ բոլորգիր: Ունեցել է երկու խորան եւ մի քանի մանրանկարներ՝ «Քրիստոսի մկրտությունը», «Մուտք Երուսաղեմ», «Խաչելություն», «Համբարձում», «Ավետում»: Այս Ավետարանը, ցավոք, չկարողացանք գտնել ձեռագրացուցակներում:

ՍՄ ձեռ. 8979, էջ 218բ

ՄՄ ձեռ. 8979, էջ 129բ

փիս Սանահին... ձեռամբ փցուն գրչի Յովհաննէս Սանահնեցւոյ... Յիշեցէ՛ք ի Քրիստոս զիս՝ զմեղապարտ գրիչս զՅովհաննէս, որ յոյժ աշխատեցանք ի գիր եւ ի ծաղիկ...»[18]:

Հաջորդը Էջմիածնի մատենադարանի թիվ 80 ձեռագիրն է[19], որտեղ Հովհաննես Սանահնեցին հանդես է գալիս որպես ծաղկող[20]: Ձեռագիրը գրվել է 1420 թ. Սանահինի վանքում «ի ժամանակիս բռնակալին Յուսովի, ի թագաւորութեանց վրաց Ալեքսանդրի»[21]: Ձեռագիրը հավանաբար երկու գրիչ է ունեցել, որոնցից մեկի անունը ջնջվել է, իսկ մյուսը Հովհաննես վարդապետն է: Պատվիրատուն Մարտիրոս քահանան է՝ Իգնատիոսի եւ Խալինարի որդին, հիշատակվում են նաեւ նրա եղբոր՝ Դավթի եւ եղբորորդու՝ Աբիսաղամի անունները: Հովհաննես Սանահնեցին հանդես է գալիս որպես «ոսկիազարդ խորանաց եւ ծաղկերանգ վարդաշատ ծաղկանց նկարող»[22]:

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում գտնվող թիվ 419 ձեռագրի գրիչը նույնպես Հովհաննես Սանահնեցին է[23]: Ձեռագիրն ունի անձնանուններով հարուստ մի հիշատակարան: Հովհաննես Սանահնեցին այս ձեռագիրն ընդօրինակել է Սանահինի վանքում 1421 թ., երբ պարսից Շահռուխը չորրորդ անգամ արշավում է Հայաստանի վրա: Այս ժամանակ վանքի առաջնորդ էր Ղազար վարդապետը: Ձեռագիրն ընդօրինակվել է «Լաւ եւ յընտիր աւրինակէ Առաքելոցոյ»[24]՝ ի վայելումն սրբասեր աշակերտի եւ հոգեւոր եղբոր՝ Մելքիսեթ կուսակրոն քահանայի: Մելքիսեթը հիշատակվում է նաեւ որպես ծաղկող եւ կազմող: Ձեռագրում պահպանվել են Մելքիսեթի հորեղբոր՝ Դավիթ քահանայի, քեռու՝ տեր Զաքարիայի, ինչպես նաեւ Մելքիսեթի ծնողների՝ հոր՝ Խութուխի, մոր՝ Մինա-Խաթունի, եղբայրների՝ Սեթի, Աթաբեկի, Մելիքի եւ Հովսեփի անունները:

Հովհաննես Սանահնեցուց մեզ հասած հաջորդ ձեռագիրը Մատենադարանի 1587 թվահամարի Շարակնոցն է, որը գրվել է 1423 թ. Սանահինում: Այստեղ Հովհաննես Սանահնեցին հանդես է գալիս որպես նկարող եւ ստացող: Ձեռագրի գրիչը Հովհաննես եպիսկոպոս Անեցին է (Ոսկեփորիկ), ծաղկողները՝ տեր Մելքիսեդեկը եւ Հովհաննես Սանահնեցին, կազմողը՝ տեր Աստվածատուրը, իսկ Տերունական աբեղան ձեռագրի համար մագաղաթ է նվիրել[25]: Ձեռագիրը գրվել է Ղազար վարդապետի աշակերտ Հովհաննես երաժշտագետի (Սանահնեցու) պատվերով. «Արդ, ես յետինս ի ծնունդս եկեղեցւոյ եւ անարգս յամենայնի Յոհանէս մեղապարտ ոգի, ի մանկութենէ սնեալ եւ վարժեալ ի դրան Սուրբ Աստուածածնիս Սանահնոյ, յաղագս յիշատակի հոգոց իմոյ ի հալալ ընչից իմոց եղու գրել Յովանէս արիհե-

20 **Ա. Երեմյան**, նշվ. աշխ., էջ 80:

21 Ձեռագիրը թերի պահպանված 36 թերթանոց Ավետարան է, նյութը՝ մեծությունը՝ 16,5x12,3x4, գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր, կազմը՝ կաշեպատ փայտակ: Ունի լուսանցազարդեր եւ զարդագրեր:

22 Տե՛ս «Էջմիածին», 1951, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 88:

23 Անդ:

24 Անդ:

25 Ձեռագիրը 249 թերթից բաղկացած Մանրուսմունք է, նյութը թուղթ է, մեծությունը՝ 10,5x7, գրությունը՝ միասյուն, գիրը՝ բոլորգիր, կազմը՝ կաշեպատ փայտ: Ձեռագիրն ունի խորան, կիսախորաններ, լուսանցազարդեր (հրեշտակ, յուղաբեր կանայք):

26 «Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 873:

27 Ձեռագիրը բաղկացած է 345 թերթից, նյութը մագաղաթն է, մեծությունը՝ 12,2x8, գրությունը՝ միասյուն, գիրը՝ բոլորգիր, կազմը՝ դրոշմազարդ շագանակագույն կաշի՝ դռնակով, ունի նաեւ պապրուսիկ-պահպանակ (Աւետարան Յովհաննու):

պիսկոպոսի՝ մականուն Ոսկեփորիկ վերաձայնելոյ շնորհազարդի եւ ճարտար գրչի, որոյ յիշատակ նորին աւրհնութեամբ եղիցի»[26]: Նոյն Հովհաննես Սանահնեցին ծաղկում է ձեռագիրը «ոսկեճաճանչ զարդուք եւ զանազան գունովք»՝ ի հիշատակ իր ծնողների՝ Վարդանի եւ Խոնձի, եղբայրների՝ Խաչատուրի, Աստվածատուրի եւ Մկրտչի, Սարգիս սարկավագի, քույրերի՝ Բատրախաթունի եւ Խաթունի, եղբորորդիներ՝ Ներսես կուսակրոն քահանայի եւ Վարդան դպրի:

Ձեռագիրն ունի բազմաթիվ կիսախորաններ, ճակատազարդեր, լուսանցազարդեր, զարդագրեր եւ մանրանկարներ (Ավետումն Աստվածածնի, Անտոն անապատական, Դավիթ մարգարե, Ղազարոսի հարությունը եւ այլն): Ուշադրության է արժանի մի տերունական պատկեր (թերթ 130բ), որը բաղկացած է երկու մասից. վերեւում՝ «Հրեշտակի հայտնությունը յուղաբեր կանանց», ներքեւում՝ «Դժոխքի ավերումը»: Վերեւի մանրանկարի ձախ կողմում, յուղաբեր կանանցից բացի, պատկերված է հայկական վեղարով մի կրոնավոր: Ըստ Կ. Մաթեւոսյանի՝ դա նկարչի՝ Հովհաննես Սանահնեցու ինքնանկարն է, ինչը հաստատում է նաեւ մանրանկարի ստորին լուսանցքի հիշատակարանը. «Եւ զիս հանցէս, Տէ՛ր, ընդ դմին/ բանտէ մեղաց աղջամղջին»[27]:

Մատենադարանի թիվ 4435 ձեռագրի մի մասի գրիչը եւ ծաղկողը Հովհաննես Սանահնեցին է[28]: Ձեռագիրը գրվել է Սանահինի վանքում «ի շրջագայութեան Հայկազեան տումարի ՊՀԳ թուի (1424), յամի որում եղեւ սաստիկ մահ տարաժամ առ ի խրատ մեղաց մերոց, ի թագաւորութեանն Վրաց Ալէքսանդրեա եւ ի բռնակալութեան տանս Հայոց թուրքման Սքանդարի եւ մեզ թագաւորելոյ Քրիստոսի Աստուծոյ, ի հայրապետութեան տեառն Պաւղոսի»[29]: Որպես ձեռագրի գրիչներ հիշատակվում են ուխտի առաջնորդ Ղազար վարդապետը, Հովհաննես վարդապետը, ինչպես նաեւ «զանպիտանս յամենայնի զՅովհաննէս, որ յոյժ աշխատեցաք ի գիր եւ ի ծաղիկ եւ ի համաբարբառոն»[30]: Ձեռագրի կազմողը տեր Կիրակոսն է: Ձեռագրի պատվիրատու Մատթեոս քահանան այն ստացել է իր նորաբողբոջ եղբորորդու՝ Ումեկի համար: Մատթեոս քահանան Ըռափի որդին էր՝ Արարատյան գավառից՝ «սնընդեամբ ի բարձրադիտակ յականաւոր եւ ի գերահռչակ սուրբ ուխտէն Հայոց թառոյ»[31]: Հիշատակվում է նաեւ նրա եղբոր՝ Մելքիսեդեկի, իր միաբան եղբայրների՝ տեր Հովհաննեսի, մեծ Հովհաննեսի, տեր Սարգսի եւ Գրիգորի անունները:

Երուսաղեմի մատենադարանի թիվ 1534 ձեռագրի ծաղկողը Հովհաննես կրոնավորն է (Սանահնեցին)[32]: Ձեռագիրը Շարակնոց է, գրված 1426 թ. Թմոք դղյակում, գրիչը Հով-

28 «Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ե, էջ 574:

29 Տե՛ս **Կ. Մաթեւոսյան,** նշվ. աշխ., էջ 92:

30 Ձեռագիրը 317 թերթանոց Ավետարան է, նյութը թուղթն է, մեծությունը՝ 27x18, գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր: Կազմը մոխրագույն մոմլաթ է, մեջքը՝ շագանակագույն կաշի: Ձեռագիրն ունի տասը խորան, կիսախորաններ՝ 12ա, 96ա, 142ա, 239ա, զարդագրեր՝ մարդագիր, թռչնագիր, հանգուցագիր, կենդանագիր: Ունի պատառիկ-պահպանակ՝ մասն ճաշոցի (Ժ դ.)՝ մանրանկարով (Մուրք Երուսաղեմ):

31 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 315:

30 Անդ, էջ 316:

31 Անդ:

32 Ձեռագիրը բաղկացած է 355 թերթից, նյութը թուղթն է, մեծությունը՝ 14x9: Կազմը դրոշմազարդ կաշի է: Ունի լատինատառ-պատառիկ պահպանակ: Ձեռագիրը հարուստ է մանրանկարներով, խորաններով, լուսանցազարդերով եւ զարդագրերով:

հաննես Անեցին է (Ոսկեփորիկ)[33]: Ձեռագիրը գրվել է Աստվածատուր կրոնավորի պատվերով «ի լաւ եւ յընտիր աւրինակէն մեծ եւ քաջ քարտուղարին Սիսոյ՝ Գրիգոր Դպրի՝ մականուն Խուլ կոչեցելոյ»[34]: Հիշատակարանում պահպանվել է Աստվածատուր կրոնավորի եղբոր՝ Զաքարիայի անունը, իսկ վերջում այլ թանաքով գրված է ծաղկողի հիշատակարանը. «Նաեւ զիս՝ բազմամեղ ծաղկող եւ նկարող փառիս զՅոհանէս սուրբանուն կրօնաւոր, որ մեծաւ աշխատութեամբ ծաղկեցի եւ ոսկենկար յօրինուածովք զարդարեցի ի փառս Տեառն եւ ի վայելս սրբասէր եւ գերամաքուր անձին՝ տէր Աստուածատուրոյ՝ սորին սպացողի եւ մեր ըստ հոգւոյն հարազատի»[35]: Այս Հովհաննես կրոնավորը, կարծում ենք, Հովհաննես Սանահնեցին է: Նախ, որ 1423 թ. նրա պատվերով Հովհաննես Անեցին Ծարակնոց էր ընդօրինակել, եւ ծաղկողը նորից Հովհաննես Սանահնեցին էր: Երկրորդ՝ թիվ 1587 եւ 1534 ձեռագրերի մանրանկարներն ունեն ոճական նմանություններ: 1534 ձեռագրի 254 թերթի մանրանկարը նորից Հարության եւ դժոխքի ավերման պատկերն է, բաժանված է երկու մասի, ինչպես թիվ 1587 ձեռագրինը: Վերեւի մասում յուղաբեր կանայք են եւ հրեշտակը, ներքեւի մասում՝ դժոխքի ավերման տեսարանն է: Այս տեսարանում Քրիստոսը բարձրացնում է ընկած Ադամին, որի ետեւում պատկերված են Եւան եւ երկու այլ անձինք, որոնցից մեկը թագակիր է՝ հավանաբար Դավիթ թագավորն է: Այս երկու ձեռագրերում Քրիստոսը գրեթե նույն դեմքով է պատկերված: Երկու մանրանկարներում նույն դիմագծերով են պատկերված նաեւ Ադամն ու Եւան: Նմանություն կա նաեւ Քրիստոսի կեցվածքի, յուղաբեր կանանց, զարդանախշերի, հրեշտակի թեւերի, գորգերի միջեւ: Վերեւի՝ յուղաբեր կանանց տեսարանում, բացակայում է Հովհաննես Սանահնեցու ինքնանկարը: Նման են նաեւ հիշատակարանները. «ոսկիազարդ խորանաց եւ ծաղկերանգ վարդաշատ ծաղկանց նկարողի՝ Յովհաննիսի» (Էջմիածին, թիվ 80 ձեռ.), «ծաղկեցի զսա ոսկեճաճանչ զարդու եւ զանազան գունովք» (ՄՄ թիվ 1587 ձեռ.), «Ոսկով եւ զանազան գունով զարդարեաց զսա», «զարդարեաց զսա սոփերական ոսկով եւ բազմերանկ գունով» (ՄՄ թիվ 8979 ձեռ.), «մեծաւ աշխատութեամբ ծաղկեցի եւ ոսկենկար յօրինուածովք զարդարեցի» (Երուսաղեմ, թիվ 1534): Այսպիսով՝ հիշատակարանների եւ մանրանկարների ոճական ընդհանրությունները թույլ են տալիս ենթադրել, որ դրանք նույն նկարչի գործերն են:

Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի թիվ 343 ձեռագրի ծաղկողը եւ սպացողը Հովհաննես Սանահնեցին է: Ձեռագիրը Մաշտոց է[36], գրվել է 1436 թ. Սաղմոսավանքում՝ «Ի դառն եւ անբարի ժամանակի, ի բռնակալութեան ջարին Իսքանդարի, որում բազում գաւառք Հայոց աւերեալ եւ հալածեալք լինէին, հայրենազուրկ եւ փարաշիարհիկ ի կողմանս Վրաց»[37]: Ձեռագրի գրիչը քահանա եւ կրոնավոր Կարապետն է, ծաղկողները՝

33 Տե՛ս **Կ. Մաթեւոսյան**, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 318:

34 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Ե, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, 1971, էջ 289:

35 Անդ, էջ 290:

36 Ձեռագիրը բաղկացած է 523 թերթից, նյութը թուղթ է, մեծությունը՝ 18x13,6: Ձեռագիրն ունի բավական շատ կիսախորաններ, լուսանցազարդեր: Ուշագրավ է 69ա լուսանցային մանրանկարը: Այստեղ խաչի կողքին՝ կամարի տակ կանգնած գլխին թագով մի կրոնավոր է նկարված, հավանաբար եպիսկոպոս է: Ամենայն հավանականությամբ սա գրչի կամ պատվիրատուի ժամանակակիցն է, որի պատկերը մանրանկարիչը ներմուծել է ձեռագրի մեջ (Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Գ, Վենետիկ, Ս. Ղազար, 1966, էջ 235-236):

37 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Գ, յօրինեցին Բ. Սարգիսեան, Գ. Սարգիսեան, Վենետիկ, 1966, էջ 242:

տեր Հովհաննեսն ու Վարդան սարկավագը, կազմողը՝ Ստեփաննոսը: Հիշատակարանում պահպանվել են Հովհաննես Սանահնեցու ծնողների, ազգականների անունները: Ձեռագրում հիշատակվում է նաեւ գրչի հոգեւոր հայր եւ վարպետ Աստվածատուրը:

Մատենադարանի թիվ 8979 Շարակնոցի ծաղկողը Հովհաննես Սանահնեցին է: Գրվել է 1437 թ., Սանահինում, գրիչը Շմավոն վարդապետն է, ստացողը՝ վերջինիս եղբորորդի Սարգիսը[38]: Ձեռագիրը գրվել է վրաց Ալեքսանդր բարեպաշտ թագավորի եւ իշխանաց իշխան պարոն Բեշքենի եւ Սանահինի առաջնորդ տեր Հովհաննեսի օրոք՝ ի վայելումն Շմավոնի դեռաբուսիկ եղբորորդու՝ Սարգսի[39]: Ձեռագրի հիշատակարանից ընկել են մեկ կամ մի քանի թերթեր որի հետեւանքով պատմական մասի սկիզբը չի պահպանվել: Շարունակության մեջ ասվում է. «Շահրուխտն, որդի Լանկ-Թամուրին, յազգէն պարսից ելաւ բազում զաւրաւք եւ անթիւ հեծելաւք ի կողմանց հարաւու եւ գերի էառ զամենայն, եւ փախստական արար զաշխարհակալս մեր՝ զկոչեցեալն Ասկանդար՝ զորդին Յուսուֆին, յազգէն Թորգոմա»[40]: Փաստորեն՝ սա բռնակալի երրորդ արշավանքն էր Հայաստան, երբ այրում ու կողոպտում է նաեւ Տաթեւի վանքը, իսկ միաբանները փախչում են Վրաց թագավորության տարածք: Տաթեւի առաջնորդ Շմավոն վարդապետը մեկն էր այդ միաբաններից, որ եկավ Սանահինի վանք. «առ ոտս բազմերանեան եւ ճգնազգեաց եւ խարազանազգեաց կուսակրաւնի՝ Յոհաննես նկարողի այս մատենի»[41]: Սակայն շուտով միտիթարություն է լինում տառապյալ ազգի համար: Իշխանաց իշխան Բեշքենը գնում է բռնավորի մոտ եւ ազատում գերիներին:

Շմավոն վարդապետին Սանահինում մեծ ջերմությամբ ընդունում է վանքի առաջնորդ Հովհաննես Սանահնեցին եւ մի կողմ թողնելով իր մարմնավոր տկարությունները՝ նրա խնդրանքով զարդարում է այս Շարակնոցը «սոփերական ոսկով եւ բազմերանկ գունով, եւ զցրուեալն կազմով ի մի ժողովեաց եւ ընձեռեաց մեզ վասն իւր բազում գթոյն»[42]: Հիշատակվում են նաեւ Հովհաննես Սանահնեցու աշակերտների՝ Ներսես կուսակրոնի եւ քաջ փիլիսոփայի, Բեհնուշ դպրի եւ Վարդան սարկավագի անուններ:

Ձեռագրում կան երեք տերունական մանրանկարներ, որոնցից մեկը Աստվածածնի ննջումն է: Այս մանրանկարի ձախ կողմում՝ պատկերի շրջանակից դուրս, նկարված է վեղարավոր Շմավոն վարդապետը՝ գավազանը ձեռքին: Մանրանկարի ստորին լուսանցքում կա

38 Ձեռագիրը բաղկացած է 351 թերթից, նյութը մագաղաթն է, մեծությունը՝ 11,2x8,5: Կազմը թավշապատ տախտակ է՝ խաչելության քանդակով: Ձեռագիրն ունի երեք տերունական մանրանկար՝ Յարութիւն Ղազարու՝ 101բ, Յարութիւն՝ 129բ եւ Ննջումն Աստուածածնի՝ 218բ, բազմաթիվ լուսանցային մանրանկարներ՝ Ընծայումն տաճարի՝ 32ա, Գրիգոր Լուսավորիչ՝ 92բ եւ այլն, կիսախորաններ, ճակատազարդեր, լուսանցազարդեր, զարդագրեր: 1801 թ. Աբրահամ վարդապետը քայքայված եւ փտած ձեռագիրը նորոգել եւ վերստին կազմել է տվել: Հետագայում այն պատկանել է Եղիշե Չարենցին:

39 Հիշատակարանում պահպանվել են նաեւ Շմավոն գրչի ծնողների՝ հոր՝ Խաչատուրի, մոր՝ Աղուտի, եղբայրների՝ Հովաղեղի եւ Բաղթիսարի, քույրերի՝ Շիրազի, Ասուկանի եւ Խաթունի, նրանց որդիների՝ Խիմշի եւ Ումիտշի, եղբորորդիների՝ Միրիջանի, Խաճաջանի եւ Խաչատուրի անունները: Հիշատակվում են Շմավոնի հոգեւոր ծնողների՝ տեր Առաքելի եւ քաջ հռետոր Մխիթարի, հոգեւոր եղբայրների՝ Եզեկիել վարդապետի, Գրիգոր վարդապետի, Տաթեւի վանքի փակակալ Մարտիրոսի անունները, ինչպես նաեւ իր հոգեւոր որդու՝ Ղազար կուսակրոն աբեղայի անունը. «որ բազում միամտութեամբ ծառայէր մեզ» («ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 469):

40 Անդ:

41 Անդ, 470:

42 Անդ, էջ 468:



ՍՄ ձեռ. 1587, էջ 130բ

ՍՄ ձեռ. 8979, էջ 101բ

հետեւյալ հիշատակարանը. «Ձերանաշնորհ եւ զերջանիկ բաբունին զՇմաւոն՝ զառաջնորդ եւ զվերադիտող առաքելական աթոռոյն Սիւնեաց՝ զգրիչ եւ զստացող ոսկեճաճանչ բուրաստանիս, յիշեցէ՛ք վերափոխման Տիրա[մօր] փօնիս...»[43]: Մանրանկարի ներքեւի մասում Հովհաննես Սանահնեցին նկարել է իր երկրորդ ինքնանկարը, սակայն, ի տարբերություն առաջինի, այստեղ իր պատկերի կողքին՝ ստորին լուսանցքում, գրել է. «Յովհաննես նկարող»[44]: Այստեղ Հովհաննես Սանահնեցին իրեն պատկերել է ավելի տարիքով եւ առանց վեղարի:

Շմավոն վարդապետին հանդիպում ենք նաեւ լուսանցային մասում արված Քրիստոսի խաչելության պատկերում: Այստեղ Շմավոն վարդապետը կրկին պատկերված է վեղարով, ծնկի եկած եւ Քրիստոսի խաչափայտը գրկած: Նրա գլխավերեւում կա հետեւյալ հիշատակարանը. «Շմաւոն վարդապետ /// տառիս»[45]: Հաջորդ՝ Հարության մանրանկարում՝ 129բ, շրջանակից դուրս պատկերված է մի երիտասարդ սարկավագ՝ բուրվառով եւ աշտանակով: Պատկերի կողքին մի փոքրիկ հիշատակարան կա, որը, ցավոք, շատ վատ է պահպանվել: Կարելի է կարդալ այսպես՝ «[Վար]դան սարկաւագ»: Սա հավանաբար Հովհաննես Սանահնեցու աշակերտ եւ ազգակից՝ վերոնշյալ Վարդան սարկավագն է:

1441 թ. Տերունական գրչի կողմից Սանահինում գրված Ավետարանի[46] ծաղկող Հովհաննես վարդապետը հավանաբար նույն Հովհաննես Սանահնեցին է: Արդեն բավականին տարիքն առած Հովհաննես Սանահնեցին ձեռագիրը «յոյժ տաժանմամբ»[47] նկարազարդում է գեղեցկատես խորաններով, լուսանցային մանրանկարներով, ավետարանիչներով եւ տերունական պատկերներով (Ղազարոսի հարություն, Ոտնլվա, Համբարձում, Հիսուսը Կայափայի առաջ, Հարություն Քրիստոսի եւ այլն): Ցավոք, ձեռագրից երկու թերթ կտրված է, որոնցից մեկը եղել է Հովհաննես ավետարանչի նկարը: Ղուկաս ավետարանչի նկարի ներքեւում կա հետեւյալ հիշատակարանը. «զՅովհաննէս մեղապարտ նկարիչ աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն վասն սիրոյն Քրիստոսի»[48]: Ըստ Վահան Հովհաննիսյանի՝ մանրանկարներում զգացվում է Կիլիկիայի մանրանկարչության ազդեցությունը:

ՄՄ թիվ 2130 ձեռագրի գրիչները Հովհաննես Սանահնեցին եւ Տերունական աբեղան են[49]: Ձեռագիրը Գրիգոր Տաթեւացու Քարոզգիրքն է, գրվել է 1447 թ., գրչության վայրն անհայտ է: Սակայն ելնելով այն հանգամանքից, որ Հովհաննես Սանահնեցին 1437 թ. արդեն Սանահինի վանքի առաջնորդ էր, հավանաբար այն պետք է գրված լիներ Սանահինում: Պատվիրատուն Հովհաննես Կաֆայեցին է: Ձեռագրում հիշատակվում են Հովհաննես Կաֆայեցու պապերի՝ Գալուստ երեցի եւ խոճա Ղազարի անունները, հոր՝ պարոն Գեորգի, մոր՝ Շիրին-Մելիքի, հորեղբոր՝ տէր Դանիել աբեղայի եւ եղբայրներ՝ Նիկողայոսի, Կարապետի, Մկրտչի անունները, ինչպես նաեւ ձեռագրի կազմողի՝ Հեղատեցի Մխիթարի անունը:

---

45 Անդ, էջ 470:

46 Տե՛ս **Կ. Մաթեւոսյան**, նշվ. աշխ., էջ 93:

47 ՄՄ թիվ 8979, 124ա:

48 Ձեռագրի նյութը մագաղաթն է, գիրը՝ բոլորգիր, կազմը սրճագույն կաշի է՝ տախտակե միջուկով: Ունի տերունական մանրանկարներ, լուսանցազարդեր եւ զարդագրեր:

49Անդ:

50 Անդ, էջ 272:

51 Ձեռագիրը բաղկացած է 426 թերթից, նյութը մագաղաթն է, մեծությունը՝ 20x13,5, գրությունը՝ միասյուն, գիրը՝ բոլորգիր: Կազմը դրոշմազարդ շագանակագույն կաշի է՝ դռնակով: Ունի նաեւ պատառիկ-պահպանակ (Աւետարան Ղուկասու): Ձեռագիրը հարուստ չէ մանրանկարներով, ունի միայն լուսանցազարդեր եւ զարդագրեր, որոնք արված են կարմիր գույնով:

Հովհաննես Սանահնեցու անունը վերջին անգամ հիշատակվում է ՄՄ թիվ 9999 ձեռագրում, որտեղ նա հանդես է գալիս որպես նորոգող եւ կազմող[50]: Ձեռագիրը հարուստ է մանրանկարներով, ունի 10 խորան, կիսախորաններ, որոնք արվել են Կիլիկիայում, ինչպես նաեւ լուսանցազարդեր: Ըստ Աստղիկ Գեւորգյանի՝ միայն կարմիր գույնով, բայց վարպետորեն կատարված այս լուսանցազարդերը հետգայում նկարել է Հովհաննես Սանահնեցին[51]:

Ամբերդի Աղավնու այրում բնակվող Ստեփաննոս վարդապետը Կոստանդնուպոլիս, Պոնտոս, Ասիա, Կիպրոս, Աղեքսանդրիա եւ Եգիպտոս կատարած ճանապարհորդություններից հետո գալիս է Երուսաղեմ, այնտեղից էլ՝ Հայոց մայրաքաղաք Սիս՝ Պողոս Կաթողիկոսի մոտ, որտեղ գտնում է մի Ավետարան՝ «իսախտեալ ի կազմէ եւ պակասեալ ի կարգէ»[52]: Ստեփաննոս վարդապետը ստանում է այս Ավետարանը, բերում Սանահին եւ հանձնում Հովհաննես Սանահնեցուն: Վերջինս լրացնում է Ավետարանի պակաս եւ թերի մասերը, նորոգում եւ կազմում. «Արդ, ես՝ անարժանս ի կարգաւորաց Յոհաննէս՝ փակակալ եւ սպասաւոր սուրբ Աստուածածնիս Սանահնու, որ ի յայն ժամանակէն մինչեւ ի յայս ժամանակս, որ ծերացեալ եմ ու ի դուռն գերեզմանին հասեալ, վկա եմ Աւետարանիս, որ հրամանաւ Ստեփանոս վարդապետին զպակասութիւն Աւետարանիս գրել եմ ու կազմել Միրանշէնի ի մեր վանիցս, որ էր սան եւ յորդէգիր յաւազանէն վարդապետին ու Սարգիս աբեղային, թողին զԱւետարանս մատ ի Միրանշէն եւ ի սանամայրն իւրեանց, եւ ինքեանք գնային յայլ տեղիս վախճանեցան, որոյ յիշատակ նոցա աւրհնութեամբ եղիցի, եւ գրեալ ի գիրն կենաց անջինջ յիշատակաւ»[53]:

Հովհաննես Սանահնեցու մանրանկարները կատարված են մեծ վարպետությամբ եւ նրբությամբ, գունային ներդաշնակությամբ: Նրա մանրանկարներում հանդիպում ենք երկսյուժետ պատկերների՝ օրինակ՝ յուղաբեր կանայք եւ դժոխքի ավերումը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաեւ նրա ստեղծած ինքնանկարներն ու ժամանակակիցների դիմանկարները: Նկարչի պատկերազարդած խորաններն աչքի են ընկնում կերպարային դրվագներով, ինչպիսին է թիվ 4435 ձեռագրի կիսախորանը (12ա), որի կենտրոնում պատկերված է Քրիստոսը, երկու կողքերում՝ Մարիամ Աստվածածինը, Հովհաննես Ավետարանիչը եւ այլք: Հովհաննես Սանահնեցին կարեւոր հետք է թողել Սանահինի գրչության եւ մանրանկարչության արվեստի զարգացման գործում: Նա «իր երկարամյա՝ շուրջ յոթսանամյակ, գրչական գործունեությամբ մոտենում է հայ գրչության ամենաերախտավորներից Հովհաննես Մանկասարենցին»[54]:

Հովհաննես Սանահնեցու համբավը տարածված է եղել դեռեւս իր կենդանության օրոք. դա վկայում է այն փաստը, որ 1437 թ. Տաթեւի վանահայր Շմավոն վարդապետը գալիս է

52 Ձեռագիրը 177 թերթանոց Ավետարան է, նյութը թուղթ է, մեծությունը՝ 23,4X16,5, գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր: Կազմ՝ դրոշմազարդ կաշի, միջուկը՝ փախտակ՝ կոստղապատ, մետաղյա բարձրաքանդակ անկյունազարդերով եւ ականակուռ մետաղյա խաչով: Խաչի կենտրոնում պատկերված է խաչյալ Քրիստոսը, աջ եւ ձախ անկյուններում՝ Մարիամ Աստվածածինը՝ մանուկ Քրիստոսին գրկած: Կազմի Բ փեղկին նույնպես կա մետաղյա բարձրաքանդակներով խաչ: Ձեռագիրն ունի նաեւ լատիներեն պատառիկ-պահպանակ:

53 Տե՛ս **Ա. Գէորգեան**, Հայ մանրանկարիչներ, Մատենագիտութիւն IX-XIX դդ., էջ 523:

54 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 436:

55 Անդ:

56 **Ա. Մաթեւոսյան,** նշվ. աշխ., էջ 39:

Սանահին եւ խնդրում Հովհաննես Սանահնեցուն նկարագարդել իր ընդօրինակած ձեռագիրը: Ծմավոն վարդապետը Հովհաննես Սանահնեցուն բնութագրում է հետեւյալ կերպ. «առն իմաստնոյ եւ առաքինի անձին՝ անմարմին ի մարմնի եւ մարմնով հաւասարեալ վերին քահանայապետութեանցն, լցեալ երկոքին որակաւ՝ տեսականաւն, գործնականաւն, համբաւ բարի եւ գործով սքանչելի եւ արուեստիւ նազելի, արգեալ ի յոգունց եւ բարգաւաճեալ ամենայն լեզուաց, զոր բազում աշխատութեամբ, որ ի ճըգանցն նուազեալ կայր...»[55]:

Հովհաննես Սանահնեցին նաեւ գրչության ու մանրանկարչության ուսուցիչ էր, նրա աշակերտներից են եղբորորդիներ Ներսես գրիչն ու երաժիշտը եւ Վարդան ծաղկողը, Բեհնուշ դպիրը, Տերունականը, Արիստակեսը, Տիրատուրը, Աստվածատուրը եւ Կարապետը[56]: Հովհաննես Սանահնեցու մոտ աշակերտելու են եկել նաեւ Հայաստանի այլ վայրերից: 1464 թ. Շատվանում (Ռշտունիք) գրված Յայսմաւուրքի գրիչ եւ 1469 թ. Մոկաց երկրի Փասավանք գյուղում գրված Յայսմաւուրքի ծաղկող եւ կազմող Ատոմ քահանան երկու անգամ հիշատակում է Հովհաննես Սանահնեցու անունը: Առաջին ձեռագրում հիշատակում է որպես վարպետ. «զառաքինի աբեղայն զՅովհանէս Սանահնեցին, որ ուսոյց մեզ զարհեստ գրչութեանս»[57], իսկ երկրորդ ձեռագրում Հովհաննես Սանահնեցու անունը հիշատակում է իր ծնողներից ու պապից հետո[58]: 1462 թ. Տեպուր գյուղում ընդօրինակված Ավետարանի գրիչ Տիրատուրն իր վարպետների հետ հիշատակում է նաեւ Հովհաննես Սանահնեցի վարդապետի անունը[59]: Նաեւ 1475 թ. Սանահինում ընդօրինակված Ավետարանի գրիչ Արիստակեսը հիշատակում է իր ուսուցչի՝ տեր Հովհաննեսի անունը որպես. «ամենայն սրբութեանց վարդապետ»-ի[60], իսկ նրա մեկ այլ աշակերտ՝ Հովհաննես աբեղան, իր ուսուցչին հիշում է որպես «ամենայն առաքինութեանց ուսուցիչ եւ վարպետ»[61]: 1458 թ. Հաղբատի վանքում ՄՄ թիվ 6260 ձեռագիրը ծաղկելիս Մանուել Նաղաշն օգտվում է Հովհաննես Սանահնեցու մանրանկարներից[62]:

Այսպիսով՝ Հովհաննես Սանահնեցուց մեզ է հասել շուրջ 13 ձեռագիր, որոնք պահվում են տարբեր վայրերում: Հնարավոր է, որ Հովհաննես Սանահնեցին այլ ձեռագրեր էլ ընդօրինակած կամ նկարագարդած լինի, սակայն դրանք մեզ հասած չլինեն, կամ ձեռագրի հիշատակարանը պահված չլինի: Բայց այս ձեռագրերն էլ բավական են, որպեսզի կարողանանք պատկերացում կազմել Հովհաննես Սանահնեցու եւ Սանահինի գրչության կենտրոնի մի փոքր ժամանակաշրջանի բեղուն պատմության մասին:

ԳԱՅԱՆԵ ԹԵՐՋՅԱՆ

---

1 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 468:

2 Տե՛ս **Ա. Մաթեւոսյան**, նշվ. աշխ., էջ 39:

3 «Զուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի», հ. Ա, կազմեց Ս. Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 336:

4 Տե՛ս անդ, էջ 339:

5 «ԺԵ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, էջ 171:

6 Անդ, էջ 374:

7 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարան», մասն Գ, էջ 242:

8 Տե՛ս **Ա. Գեւորգյան**, նշվ. աշխ., էջ 361: